

937

206

U-68

1905

3  
10/216  
Ե. ԱՊՐԻԼԵԱՆ

23 արդյուն 1905/6  
8-



I

ՄԻ ՀԱՄԵՍ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ  
ԳԻՒԼԱԿԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՑՈՒՆԵՐԻՆ

ե ի

ՔԱՀԱՆԱՆԵՐԻՆ

II

ԱՆԿԵՂԾ ԲԱՐԵԳՈՐԾԸ



206  
Վ. 68

Թ Ի Փ Լ Ի Զ  
ԱՐԱԳԱՏԻՊ ՄՆ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՅԻ  
ԳՈՒԼԿԻՆԵԱՆ ՓՈՂՈՑ, 12  
1905

2001

2010

Հայ-թուրք ի պատեր քաղաքում

280  
692-47

Կ. Ս. ՊՐԻԼՆԱՆ

1915 թ. 5  
թիվ

206  
Ա-68 ա.բ.

I

ՄԻ ՀԱՄԵՍ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

ԳԻՒՂԱԿԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՑՈՒՆԵՐԻՆ

ե հ

ՔԱՀԱՆԱՆԵՐԻՆ



II

ԱՆԿԵՂԾ ԲԱՐԵԳՈՐԾԸ

88861



ԹԻ ՓԼԻԶ  
ԱՐԱԳԱՏԻՊ ՄՆ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ  
ՊՈՒՂԿԻՆԵԱՆ ՓՈՂՈՑ, 12  
1905

13252-88

199802-4.հ.

Ն Ո Ւ Ք Բ

ԲԱՐՈՅԱԽՕՍ ԵՒ ՍՐՏԻ ԶԱՐՈՂԻՉ

## ՀԱՅՐ ԱՐՍԷՆ ԲԱԳՐԱՏՈՒՆՈՒՆ

ՔԱՂԱՆԱՅՈՒԹԵԱՆ, ՈՒՍՈՒՑՉՈՒԹԵԱՆ

ԵՒ

ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

ԵՐԵՄՆԱՄԵԱԿԻ ԱՌԹԻԻ

Կ. Ա.

Дозв. ценз. Тифлисъ, 23 Марта 1905 г.

## Տէր Հայր,

Սոյն իմ համեստ աշխատութիւնը, որ սրտիս արձագանքն է, կամեցայ զարդարել Ձեր անարատ և պաշտելի անունով. Ձեր՝ որ գիտեմ բաբի սրտիդ այնքան հաճելի կը լինի սրա ի լոյս հանելը և մանաւանդ արտայայտուած գաղափարներին իրականանալը:

Դուք, Հայր, երկար տարիներ լուռ ու մունջ, տոանց ցուցամոլութեան, Ձեր կենդանի խօսքերով շատ սրտեր էք կրթել, որին ես տկանատես եմ եղել: Ձուր չեն Ձեզ պաշտող բազմաթիւ աշակերտներդ և աշակերտուհիներդ «Արտի քարոզիչ» անուանել: Դուք շատերին առաջնորդել էք նախ ընտիր և պարտաճանաչ մարդ լինել և ապա հոգեւորական. դուք էիք որ ուսումնս քրիստոնէութեան ուսուցանելու ժամանակ թելադրեցիք մեզ այն, ինչ որ դեռ ոչ մի ուսուցիչ և մանաւանդ կրօնուսոյց չէ ուսուցել իւր սաներին—դա է այն իրարանցում ձգող խնդիրը, որ այսօր իբրեւ մի բարեք է հռչակուած ամենուրեք—ամուսնացող փեսացուից պահանջել բժշկի վկայական: Ձեր ուսուցման մէջ մտնում էր ոչ միայն փեսացուի, այլ և հարսնացուի առողջութեան մասին մտածել և հոգալ ծնողների կողմից. և ոչ միայն վեներական ախտերի, այլ նաեւ ժառանգական և տարափոխիկ տկարութիւնների մասին. շեշտելով նաեւ ազնւութեան ու բարոյականութեան մէջ կաղող ու թոյլ ընտելութիւնների վրայ: Սակայն դուք, իբրեւ սրտի

քարոզիչ՝ մեզ ուսուցանում էիք—որ որդեսէր ծնողները իրենք պիտի դիմեն բժշկին և խնդրեն նոցա կարծիքը իրենց երկսեռ որդոց առողջութեան մասին նախ քան պսակը: Քանի՜ դասեր էք նուիրել Պսակի կամ Ամուսնութեան խորհրդի որպէս և եկեղեցւոյ միւս սուրբ խորհրդների բացատրութեանը: Ինչպիսի՜ ոգևորութեամբ յիշում եմ ձեր պարզ, հասկանալի և դրական բացատրութիւնները հետեւեալներում—Մկրտութիւնը՝ Զինուորութիւն է. Դրոշմը՝ սպառազինութիւն է: Ապաշխարութեան մէջ՝ քննել օրական կեանքը, որից և դուրս էիք բերում «Անհատական գրքի» կարևորութիւնը, որը այսօր գրեթէ համատարած է Ձեր երկսեռ հազարաւոր աշակերտութեան մէջ, որոնց հետեւում են և շատ շատերը, որոնք բաղդ չեն ունեցել Ձեզ աշակերտելու: Այո՛, դուք էք, Հայր ուսուցիչ Անհատական գրքի հեղինակը, այդ գրքով ենք քննում մեր օրական կեանքը և ճանաչում մեզ: Ինչպէս չյիշեմ Ձեր «առ մարդ» ապաշխարութեան ընդարձակ բացատրութիւնը, որը յանգում էր նրանում—թէ պատճառած վնասները, թէ նիւթական և թէ բարոյական պէտք է վճարել: «Չարչարել մարմնական կիրքերը» բացատրութեան մէջ առնելով և՛ քահանայ և՛ բժիշկ և՛ փաստաբան և՛ ուսուցիչ... և այլն. և մէկ մէկ բացատրելով իւրաքանչիւրի թէ պարտաճանաչութիւնը և թէ պարտազանցութիւնը: Խոստովանութեան կարևորութիւնը, որի բացատրութեան համար քանի՜ դասեր էք նուիրել, առատ առատ օրինակներ դնելով մեր առաջ կեանքից: Հաղորդութեան խորհրդի բացատրութեան, մէջ որպիսի՜ ոգեզմայլութեամբ յիշում եմ Հաղորդութիւն, Հաց բեկանել—Օրհնութիւն, Գոհութիւն և Պատարագ յորջորջմունքները, որ ամեն մի անհատ իբրև հաց պիտի բեկուի, մանրուի ու գոհութեամբ և օրհնութեամբ բաժանուի ընկերի նիւթական, մտաւոր և բարոյական կարիքների մէջ ու դորանով նա հաղորդ կամ մասնակից կը լինի ընկերի

կարիքն երին: Կարգի կամ Ձեռնադրութեան խորհրդի քացատրութեան մէջ, սրբան պարզ և որոշ ուսուցմամբ հասկացնում էիք մեզ «Աստուածային կոչումն», «Առաքելական հոգի» և «Քահանայացուի քննութիւնը» կարգին արժանաւոր լինելու պայմանները: Քանի՜ դասեր էք նուիրել—որ իւրաքանչիւրը մեզանից կարողանայ իւր կոչումը իւր մէջ որոնել: Որպիսի խիստ լեզու ու և ոգևորուած յուզմամբ խօսում էիք քահանայացուի կիսատ-պոստ քննութեան մասին: Որպիսի խստ ապահանջ ոճով շեշտում էիք—թէ քահանայացուի քննութեան մէջ բացէ ի բաց դուրս է չպրտուած Հաւատի քննութիւնը—թէ քահանայացուն ունի՜ արդեօք իւր պաշտօնին յարմար գիտութիւն և իւր կոչման վերաբերեալ հաւատ. թէ մտնում է Հաւատի հանգէսը առանց Հաւատի: Այն ոճը և հոգեկան դայրոյթը, որով դուք դասախօսում էիք մեզ, այսօր իսկ յիշելիս՝ սարսուռ է անցնում վրայովս և սարսափահար է հանդիսանում ինձ ձեր բարի և մարդասէր կերպարանքը: Իսկ Ամուսնութեան խորհրդի բացատրութեան մասին՝ կարճ եմ Ձեր ութ-ինն դաս բացատրութիւնը տեղաւորել այստեղ, որը եթէ գրելու լինէի երկու երեք անգամ ստուար դուրս կը գար այս գրքոյկից:

Շատ այսպիսի կենդանի և բարոյակալիչ զասերիդ վսեմ և բարձր նպատակը եղած է այն՝ որ մենք կեանքի մէջ մտնելուց յետոյ պատրաստի հոգ գտնենք, որի վերայ պիտի ապրենք ու դործենք, չբաժանելով մեր անհատական շահն ու վաստակը և բարիքը հասարակ կանից:

Եւ ես նուստոս, Ձեզ ջերմ սիրող աշակերտ դ՛ Ձեր ջերմեռանդ հաւատի մէջ տեսել եմ մեր նախնի իսկական հոգեւոր սուրբ հայրերի տիպարը, որ «Ժամու և տարածամու» միշտ ջանացել էք թափանցել մատաղ սրտերի ներսը և նրանց սրտի լարերին ներշնչել էք նուագել բարութիւն և լաւը, ազնուութիւնը և

խակական մարդասիրութիւնը: Ահա Ձեր քարոզած վեհ  
գաղափարները, աշակերտիդ սրտի մէջ, ինձ թւում է  
որպէս թէ աճել է և պտուղ է բերել, թէև դեռ խակ  
որ և ի լոյս եմ ընծայում այսօր երեսնամեայ բեղմնա-  
ւոր գործունէութեանդ ցանկալի յօբելանսի օրը: Նուա-  
տըս, որ սնուել եմ Ձեր անուշաբոյր Աւետարանական  
կաթով, էլ մեծ անունով պիտի զարգարէի սորա ճա-  
կատը, եթէ ոչ Ձեր: Ընդունեցէք սիրելի ուսուցիչ-  
Հայր, համեստ նուէրս, որ բղխում է սրտիս խորքե-  
րից: Զէ՞ որ դուք սրտի քարոզիչ էք. և ես անարատ  
սրտերից եմ սպասում իմ ցանկալի գաղափարի իրա-  
կանանալը:

Երախտապարտ աշակերտդ՝

ԿՈՍՏ. ԱՊՐԻԼԵԱՆ.

## I

ՄԻ ՀԱՄԵՍՏ ԸՌԸՋԱՐԿՈՒԹԻՒՆ

ՊԵՐՉԱՄԵՆ ԶԱՀԵՆԱՅԱՅՈՒՆԵՐԻՆ

ԵՒ

Ք Ա Հ Ա Ն Ա Ն Ե Ր Ի Ն

«Ոչ մի ժամանակ զիտումեան  
«ճանապարհը կանաչադարձ էւ  
«ծաղկաւէտ չէ եղել. այլ միշտ  
«մարդուն հարկաւոր է բարձրա-  
«նալ լիակ ժայերով»:

Թ. Լ. ՍԱԼԻԿԻ

Մենք այստեղ երկար չենք խօսի՝ թէ ի՞նչ  
է քահանայութիւնը. միայն մի քանի խօսք կա-  
սենք թէ ովքեր պիտի ձգտին զիւղերում քահա-  
նայանալու. և արդէն ձեռնադրուածները ի՞նչ  
պիտի անեն:

Գիւղական քահանայութեան համար անշուշտ  
պիտի ձգտին միայն նրանք՝ որոնք նախ և առաջ  
կենդանի հաւատ ունին: Հաւատ չունեցողը, եթէ  
մարդ է՝ նա՝ և կրում է իւր սրտի մէջ խիղճը,  
նա յետ պիտի կենայ այդ սրբազան ասպարիզից,  
որպէսզի չգայթակղեցնի պարզամիտ գիւղացի-  
ներին: Երկրորդ պայմանը ուսումն է. հաւատի  
հետ շաղկապուած:

Այն երիտասարդը, որը կամենում է մտնել քահանայական ասպարէզի մէջ, ամենքից առաջ հեռու պիտի լինի միմիայն հացի ինդրի համար քահանայանալուց. այդ ծանր և մեծ յանցանք է մարդկութեան և իւր խղճի առաջ: Նա նախ և առաջ հաշիւ պիտի տայ իրան թէ ինչո՞ւ համար է քահանայ դառնում. եթէ հացի ինդրի համար՝ չարաչար սխալւում է. և այդ տեսակ մարդն արժանի չէ մարդ անուն իսկ կրելու, ուր մնաց թէ քահանայ, որը մարդ է և միաժամանակ հայր ժողովրդի: Կան մարդիկ, որոնք քահանաներից շատերին անուանում են *ճրիակներներ*. և մասամբ իրաւունք ունին, քանի որ գիւղական քահանաները մեծ մասամբ այդպէս անպէտք կը մնան և միայն օրէնքներ կատարելու կամ յաջող ձայն ունենալու մէջ կը տեսնեն իրանց կոչումը: Որպէսզի նա այդ դատապարտելի անունը չըվատաւկի նա ունի մի մեծ պարտք, մի շատ լուրջ գործ կատարելու և առանց այդ, նա ոչինչ է, անարժան է և իսկապէս անպէտք ձրիակեր:

Ի՞նչ է գիւղական քահանայի իսկական կոչումը՝ քարոզել, ժողովրդի սիրտը ազնուացնել ժամանակակից խելացի քարոզներով և այն էլ առանց բացառութեան ամեն կիրակի և տօն օրերը \*):

\*) Արտասահմանի շատ գիւղերում, ում յայտնի չէ որ, կիրակնօրեայ մշտական քարոզչութիւնը շատ է տարածուած ու պահանջ դարձած վաղուց, միթէ ժամանակ չէ՞ որ այդ գեղեցիկ սկզբունքը ընդունուէր և

Բայց ի՞նչպէս պիտի քարոզի, ահա հարց, որի համար կասենք մի քանի խօսք: Նախ և առաջ ուշադրութիւն պիտի դարձնել այն խօսքերի վերայ, որը ասուած է մեր Տէր Յիսուսի համար և որը Նրա Աստուածութիւնից յետոյ առաջին գրաւական էր նրա գործունէութեան կատարեալ յաջողութեան: Դա այն սրբազան խօսքերն են, որով պիտի ոգևորուեն բոլոր քահանաները. և որը իրանց գլխաւոր նշանաբան և կէտ նպատակ պիտի լինի. «Նախ առնէր և ապա ուսուցանէր...» ում յայտնի չէ, որ այս մի անուրանալի ճշմարտութիւն է, առանց որի երբեք չի կարելի գործ կատարել ժողովրդի մէջ և ազդել նրան: Իմ հահաւքած տեղեկութիւններից և փորձերից էլ գիտեմ, որ շատ վատ է ազդում, երբ առաջին քանդողը՝ հէնց ինքը քարոզողն է լինում. քահանան պարտաւոր է կատարել իւր քարոզածը և չըգայթակղեցնել ժողովրդին. իսկ եթէ յաճախ մեղանշում է և խիղճ ունի՝ թող հեռանայ այդպիսին ասպարէզից, իսկ քահանայուն, առանց այդ սուրբ պարտաւորութեան թող չձգտի քահանայութեան:

Քահանան կենդանի օրինակ հանդիսանալով՝ համաձայն Յիսուսի Ս. Աւետարանի, պիտի քարոզի ամեն տեղ «ի ժամու և տարաժամու...» մանաւանդ Ս. պատարագին, բացառի տօներին

մեղանում: Ըստ իս եթէ գիւղական քահանան ամեն կիրակի չէ քարոզում, նա անպարտաճանաչէ:

նշանակութիւնը, թարգմանի օրուայ Ս. Աւետարանը և յարմարեցնի մեր կեանքի հետ, առանց դաւաճանելու Աւետարանի վսեմ սկզբունքներին և միշտ ժողովրդի սրտի կրթութեան յորդորակներով համեմել՝ հասկացնելով մեր ծագումը. կրօնը. պարտք առ Աստուած և առ մերձաւորն. ձեռքից չըթողնել և լուսաւորութեան մատին խօսել... և բարոյականութեան առաջնորդ հանդիսանալ, անշուշտ նորից կրկնում ենք՝ իւր կենդանի օրինակով:

Ով որ ստացել է քահանայութեան աստիճանը, նա իրաւունք չունի թմբելու, նա կոչուած է միշտ զգաստ լինել, իւր աշխարհայեացքը պիտի աշխատի լայնացնել նորանոր ընտիր զրքերի յաճախակի լուրջ ընթերցանութեամբ և Ս. Աւետարանի ուսումնասիրութեամբ և մինչև կեանքի վերջին րոպէն պիտի սովորի և սովորեցնի. նա պիտի լինի ուսուցիչ-գործիչ: Ում համար այս ամենը դժուար է, ժամանակ է վերջապէս որ նա չըձգտի քահանայութեան. հոգեորականութիւնը մի արհեստ չէ, այդ սուրբ ասպարիզին ներկայումս պիտի մերձենայ միայն եռանդուն գործունեայ երիտասարդը: Ժողովուրդը զգուել է և այդպիսիների պատճառով հոգեորականի պատիւը դժբաղդաբար վայր է ընկել և «ձրիակեր» կեդտոտ անունը ստացել: Պարտաճանաչ հոգեորականները պիտի բաղմանան և ապացուցանեն որ ճիշտ է կան «ձրիակերներ» բայց կան և հարազատ գործիչներ, նրանք էլ պիտի պատերազմ

մղեն և ձրիակերների դէմ, դոքա ժողովրդի վերածնութեան և խաւարից հանելու մեծ գործի համար օր և գիշեր պիտի աշխատեն իրանց պարտաճանաչ գործունէութեամբ և կենդանի քարոզներով: Թող ժողովուրդն էլ այդ տեսակ պարտաճանաչ քահանաներին վարձատրի նիւթապէս և բարոյապէս և թոյլ չ'տայ յուսահատուելու, որ հացի համար մտածի և իւր սուրբ պարտքը մոռանայ:

Բացի քարոզից՝ գիւղական քահանան ծխակատարութեան ժամանակ ունի և՛ս մեծ պարտաւորութիւն և թող նա օգտուի նրանից, նա իւր կէտ նպատակ պիտի դնի — որ իւրաքանչիւր Ս. Խորհրդի կատարման ժամանակ անպայման սովորութիւն դարձնի բացատրել Սուրբ օրէնքը. օրինակ ամուսնութիւնը, նա պիտի բացատրէ այդ Խորհրդի իսկական նշանակութիւնը, ինչ մեծ պարտաւորութիւն ունեն նորապսակները դէպի իրար և դէպի իւրեանց հասարակութիւնը, երբէք ձեռքից չըպիտի թողնուի այս, եթէ օրէնսակ նոյն իսկ միքանի պսակ ունենայ: Խելացի քահանան կաշխատի պսակից մի օր առաջ գտնել ժամանակ և ազատ երկար խօսել (և ապա նոյնը համառօտել եկեղ. խոստովանութեան ժամանակ). և կրօնական-բարոյական խրատների հետ, նաև գիտական զրքերի խօսքերով նրանց սիրտը պատրաստել. (նպատակայարմար է զբաղէտ գիւղացիներին ամուսնութեան վերաբերեալ զրքոյկներ նուիրել). կնճճնք, օ, դա էլ չպիտի մի բաժակ օղիով և

ճաշով վերջանայ. պարտաճանաչ քահանան սո-  
վորութիւն պիտի անի, որ իւրաքանչիւր մկրտու-  
թիւնից յետոյ ընդարձակ բացատրի այդ Ս. խոր-  
հրդի նշանկութիւնը, կնքահօր պարտաւորութիւնը  
գէպի սանիկը և այլն: Օրինակ անհրաժեշտ է  
պարզել որ կնքահայրը պարտաւոր է անպայման  
նրա հոգևոր դաստիարակութեան վերայ հսկել որ  
կանոնաւոր լինի և դժբաղդութեան ժամանակ.  
(ծնոցների մահուան կամ չքաւորութեան գէպ-  
քում). որդու պէս խնամել և միշտ աչքի առաջ  
ունենալ նրա բարոյական դաստիարակութիւնը  
և այլն. հակառակ գէպքում Աստուծոյ և խղճի  
առաջ կնքահայրը մեղաւոր է և դատապարտելի:  
Հայաստանեայ Ս. եկեղեցու սրբազան խոր-  
հուրդներից մէկն էլ Ապաշխարութիւնն է, խոս-  
տովանութեան հետ լծորդուած. կրթուած տղէտ-  
ները թերևս նրան այնքան նշանակութիւն  
չտան, բայց մենք այստեղ մեծ ուշադրութիւն,  
կը դարձնենք, որովհետև քահանան խոստովանելու  
ժամանակ, բացի «մեղայից» եթէ ձեռնհաս է և  
բարոյական՝ կարող է հանդիսանալ իւր կենդանի  
խրատներով իբրև կրթող-ուսուցիչ, որով խոս-  
տովանողը մեծ օգուտ կը ստանայ: Բայց ինչ որ  
վերև ասինք, ի նկատի պիտի ունենալ, որ  
խոստովանող-ուսուցիչը հակառակ չըգործի իւր  
քարոզած սկզբունքներին, թէ չէ իւր աշխա-  
տանքը անպտուղ կը լինի:

Եւ գիտեմ քաղաքներից մինում մի քահա-  
նայ, որին իմ մանկութիւնից ճանաչում եմ,

խոստովանութեան (և առհասարակ) ու ամեն դիպող  
և յարմար ժամանակ ինչ բարոյական, գիտա-  
կան և սրտի կրթութեան կենդանի խօսքեր ասես  
որ չէ բղխում նրա շրթունքներից և այդ ա-  
մենը, պիտի յիշել, որ ներդաշնակ է նրա բա-  
րոյականութեան հետ, նա երբեք չէ հակասում  
իւր խօսքերին, բնականաբար շատերի սրտերը  
նուաճում են նրանից և ոչ ոք առանց բարո-  
յական օգուտի չէ վերադառնում նրանից: Որքան  
ցանկալի է որ գիւղերում, ուր աւելի պէտք է,  
այդ տեսակ քահանաներ շատանային:

Եւ այսպէս ամեն ծիսակատարութեան ժա-  
մանակ, պարտաճանաչ քահանան պատշաճ գէպ-  
քերում պիտի հասկացնի և ոչինչ թողնի առանց  
բացատրելու:

Այժմ տեսնենք թէ մեր գիւղական քահանան  
ինչ պարտաւորութիւն ունի կատարելու եկե-  
ղեցուց դուրս. օ, շատ մեծ պարտաւորութիւն  
ունի. նա գիշեր ցերեկ, կարողացածի չափ, միայն  
ազնիւ միջոցներով, պիտի սրբի թշուառների ար-  
ցունքը, ապա թէ ոչ նա անարժան կը լինի  
«Տէր Հայր» կոչուելու. էլ ինչ հայր է, երբ նրա  
հոգևոր զաւակը տառապում է յետին չքաւորու-  
թեան մէջ և նրանց տխուր աչքերից շարունակ  
ցայտում են դառնադէտ թշուառութեան արցուն-  
քի կաթիլները... գուցէ մեզ հարց տան թէ ինչ  
անի գիւղական քահանան, ինչպէս օգնի, երբ

ինքը չունենոր է և կարօտ: Դրա համար կայ ճանապարհ — հարուստներ և կանոնաւոր հաշուետուութեամբ վստահութիւն ձեռք բերելը: Պիտի թախանձել, համոզել ունեւորներին որ մարդու կեանքը անցաւոր է, անցաւոր չէ միայն բարութիւնը և թշուառների արցունքը սրբել. մարդս այդ տեսակ բարութիւնից կարող է միայն իսկական ուրախութիւն վայելել, ի հարկէ ով որքան ձեռնահաս է: Բարի քահանան կաշխատի վիճակահանութեամբ հաւաքել տարին մի որոշ գումար, ինչպէս և որեւէ հեղինակի գրքոյկը հրատարակել՝ իրաւունք ստանալուց յետոյ և կանոնաւոր հաշիւը ներկայացնել:

Իսկական քահանան որ արդէն համբաւ է հանել իւր բարի գործերի համար կանոնաւոր հաշուետուութեամբ, նա կարող է ամեն մի օրինակատարութեան ժամանակ մի քանի ռուբլի նուիրել տալ յօգուտ թշուառների, որով հարկաւոր դէպքում շատ կարօտեալների արցունքը կը սրբուի: Շատ ցանկալի է և այդ կախուած է եռանդուն քահանայից, որ ննջեցեալների վերջին յարգանքի առթիւ եղած մեծ ծախսերը կը ճատուէին և այդ կը ճատուէին յօգուտ թշուառների մաս հանուէր: Գանձը, լաւ է որ, չպահուի քահանայի մօտ, այլ յանձնել այլ վստահելի մարդուն, թէ չէ կեղտը կը քսեն քահանային՝ որով վստահութիւնը կը կորցնի. փողից հեռու, բայց թշուառին մօտիկ:

Գիւղական քահանան անպայման պիտի ընթերցասէր լինի, աստուածաբանական, դիտական գրքերի սիրահար և սովորեցնող: Նա պարտաւոր է գիտութիւնը հաշտեցնելով կրօնի հետ ժողովրդին յարմար դէպքում հասկացնի գիտութեան նշանակութիւնը — ժողովրդական գրքերի ընթերցանութեամբ և ձգտի նրանց նախապաշարումների վերայ ազդել հետզհետէ հասկացնելով, բայց Աստուծոյ Ս. Անունը երբեք ձեռքից չթողնելով և երկիւղածութեամբ յիշելով: Յանկալի է որ գիւղատնտեսութեան և կաթնատնտեսութեան վերաբերեալ գրքերը կարգաւ խմբով, հասկացնել, բացատրել և ուղեցոյց հանդիսանալ գիւղատնտեսական գործիքները բազմացնելուն, յարմար դէպքում ինքն անձամբ սովորելով և ապա նրանց սովորեցնելով: Ճիշտ է մեր ժողովուրդը շատ դժուարութեամբ է մարսում նորութիւնները, բայց պիտի ձգտել, համոզել և ազդել: Բացի դրանից, եթէ հնարաւոր է, մեծ գիւղերում պիտի գլուխ բերի փոխատու խնայողական ընկերութիւններ և այլն:

Հուշակաւոր Հերբերթ Սպենսերի գրուածքներում կարգացել եմ մի այսպիսի կտոր. «Գիտութիւնն և կրօնը երկուրեակ քոյրեր են...» մինը միւսից չի կարելի բաժանել. և, իսկապէս, որքան փայլուն հետեանքներ են ունենում, երբ այս երկուսը քոյրերի պէս իրար ձեռք մեկնած առաջ են գնում: Վերցրու հաւատը առանց գիտութեան՝ դա ոչինչ է. և ընդհակառակ գիտու-

թիւներ առանց հաւատի՝ նմանապէս ոչինչ է։ Որքան ցանկալի է որ նշանաւոր փիլիսոփայի խօսքերը նշանաբան ընդունուէր մեր զիւղական քահանաների կողմից և այնպէս առաջնորդուէին։ Հայ ժողովրդին յատուկ ջերմեռանդութեան վերայ ծխատէրը պիտի պատուաստէ և լուսաւորութիւնը, որքան որ կարող է։

Այսպէս, նա ընթերցանութեան միջոցով զիտութիւն պիտի տարածէ—պիտի աշխատի որ լրագիրներ, ամսագրեր և զրքեր հաւաքական ոյժով բերել տալ և ապա բոլորին հերթով բաժանել կարգալու (զրագէտներին), իսկ անզրագէտներին պատմի և յորդորի որ սովորեն\*)։ մէկ խօսքով խաւարի դէմ պատերազմ և երբեք զինաթափութիւն։

Մեր լրագրական անաշառ թղթակիցները և ժողովուրդը թանկ պէտք է գնահատեն այդ տեսակ քահանաներին, որովհետև նրանք որպէս քաջ պատերազմիկներ արժանի են խրախուսանքի, որպէս զի չյուսահատուին. և նրանց վարձատրութիւնը պիտի լինի անկեղծ համակրութիւն և օգնութիւն նիւթապէս և բարոյապէս։

Գիւղական քահանան ունի և մի ուրիշ կարևոր պարտք՝ նա իւր փորձառութեամբ, զրքերի շնորհիւ անպայման բժշկի դեր էլ պիտի կատարի. մանաւանդ այնպիսի տեղերում, ուր բժիշկ կամ

\*) Մի քանի դէպքեր գիտեմ, որ 30 ամեայ գիւղացին այդ հասակում սովորել է կարգալ և զրել։

Ֆելդշեր չկայ\*)։ Մեր գրականութեան մէջ կան մի քանի լաւ բժշկարաններ, վերջապէս ռուսաց բազմաթիւ հրատարակութիւններից էլ կարելի է օգտուել։ Քահանաները այդպիսով կարող են, հարկաւոր «դէպքում, առաջին օգնութիւն հասցնել կարօտեալներին մինչև բժշկի գալը։ Դեղորայք չքաւորներին համար կարելի է թեմական առաջնորդի թոյլտուութեամբ ձեռք բերել եկեղեցական գումարներից և բաժանել ձրի, ապա կանոնաւոր հաշիւը ներկայացնել ամենքին, ցանկալի է և լրագրութեան մէջ։

Գիւղական քահանան անշուշտ տեսնում է իւր շուրջը բազմաթիւ մանուկներ. պէտք է զթաւատ սրտով նրանց վերայ էլ ուշադրութիւն դարձնէ. այդ էլ նրա պարտքն է, պէտք է աշխատէ, որ նրանք անուսում չմնան. նրանց հոգևոր դաստիարակութեան վերայ պիտի հսկի և ծնողներին համոզի որ անուսում չթողնեն իւրեանց երեխաներին, քահանան պիտի սովորեցնի ուսումնարանի ճանապարհը։

\*\*) Նպատակայարմար է որ այն քահանայացուն, որ մտադիր է քահանայանալ այնպիսի զիւղում, ուր բժիշկ կամ ֆելդշեր չկայ, նախ քան ձեռնադրուելը մի որ և է հայ բժշկին խնդրի, որ ծանօթացնի նրան ամենատարեական բժշկութեան հետ և ձեռքին ունենայ անային բժշկական բրօշիւներ, զրքեր։ Կառաջարկէինք այդպիսիներից ունենալ բժ. Լևոն Տիգրանեանի գերմաներէնից թարգմանած բժշկարանը, որին կից է և բժշկական քառարանը. ունենալ նաև բժ. Վահան Արծրունու Առողջապահիկ բժշկական թերթը և այլն։

Այցելութեան ժամանակ օ, ինչքան քաղցր է մանուկների հետ զրոյց անել բարոյականութեան մասին, յարմարաւոր պատկերների ժողովածուն ցոյց տալ (հոգևոր և այլ բովանդակութեամբ): Բայց մանուկներին, թոյլ եմ տալիս ինձ ակնարկելու, ինչ որ ասի քահանան պիտի զգոյշ լինի, որ այնպիսի բան չդուրս գայ որ նոյն իսկ երեխաներն ասեն «Տես, Տէր Հայրը մեզ ասում է չանել, բայց ինքը անում է...» այսպիսի օրինակները դժբաղդաբար շատ եմ տեսել<sup>6</sup>): Պարտաճանաչ քահանան ուրիշի ընտանիքի մէջ քարոզելուց առաջ՝ նախ պարտաւոր է իր զաւակները այնպէս կրթել, ինչպէս որ ցանկանում է որ ուրիշները լինին, հակառակ գէպքում կարող է մէկը դուրս գալ և ասել. «Թիշկի բժշկեալ գանձն քո»:

Գիւղական պարտաճանաչ քահանան չպիտի սիրի պարագլուխին և նրա համար նա ժամանակ չունի բոլորովին. և որտեղից կարող է ու-

\* ) Պատմեմ մի դէպք .

Ես երեկոյ էի հագիւ 8—9 տարեկան, եկեղեցում մի օր քահանան բարկացաւ իմ ընկերոջ՝ որ ձեռք էր տուել եկեղեցական գրքին համբուրելու համար, որովհետեւ չէր հասնում. ընկերս շատ էր վիրաւորուել, մանաւանդ այն խօսքերից որ ասում էր. «ասպիտաններ ձեր կեղտոտ ձեռքով էք ս. գրքը վերցնում և համբուրում». և նոյն քահանան իւր ընկեր քահանայի հետ յաճախ կուտելու ժամանակ Խաչ ու Սևետարանով էր ծեծում, սորան ես ականատես եմ եղել, ինչպէս և շատերը:

Նենալ երբ անընդհատ նրան զործը անսպասա է.  
պարագուլթիւն կը սիրի միայն անպարտաճանաչ  
քահանան և նրանից նա կը վաստակի անհամո-  
թիւն ևայն:

Գիւղական քահանայի պարտքերից մինն էլ այն է, որ ժողովրդին սովորեցնի մաքրութիւն և ստողջապահութիւն և այդ նախ իւր տնից և եկեղեցուց սկսելով: Եկեղեցին պիտի մաքրութեան օրինակ լինի ամենքի համար, մաքուր անօթներ և պայծառ զգեստներ, այս ամենը միշտ աչքի առաջ պիտի ունենայ: Պայծառ զգեստով պիտի պատարագ մատուցանի, որպէս զի աւելի սզդի ժողովրդեան վերայ:

Պարտաճանաչ քահանան երբ իմանում է որ գիւղին սպառնում է որ և է համաճարակ հիւանդութիւն. օ, նա մեծ գործ ունի կատարելու, նա շատ բան ունի անելու, նա պիտի դուրս գայ և համոզէ ժողովրդեան, որ Աստուած մեր ջերմեռանդ աղօթքը կը լսի, եթէ մենք ձեռքերս ծալած չնստենք, այլ մաքրութիւն սիրենք և հիւանդութեան դէմ պատերազմենք բժշկական միջոցներով և Աստուծոյ յուսով: Այսպէս քահանան պիտի աշխատի մաքառել որքան իր ոյժերը կը ներեն, ի հարկէ, բայց լաւ է միացած ոյժով, ծխականների աջակցութեամբ: Նա պիտի քաջօրէն պատերազմէ և յաղթանակով դուրս գայ, եթէ վնասուի էլ չըպիտի վախենայ կամ տրտնջայ, պէտք է մտածէր ձեռնադրութիւնից առաջ. ո-



ըովհետեւ քահանան այլ ևս իրան չէ պատկանում, նա ամբողջովին ժողովրդին և ժողովուրդը՝ իրան, երկուսի փոխադարձ անկեղծ սիրոյ մէջ կարող է աճել երջանկութիւնը: Քահանայի գործունէութիւնն էլ մի պատերազմ է, պատերազմի դաշտում զինուորը դուրս է գալի յանուն հայրենիքի պաշտպանութեան, կամ մի որեւէ վեհ գաղափարի. այստեղ քահանայ—զինուորն էլ պիտի մարանչի հայրենիքի լուսաւորութեան և իւր ժողովրդի օգնութեան համար: Պատերազմի դաշտում զինուորը միշտ վտանգի մէջ է. բնական է, որ զիւղական պարտաճանաչ քահանայ—զինուորն էլ կարող է վտանգի ենթարկուել: Երկուսն էլ կոչուած են իրանց պարտքը կատարելու, երկուսն էլ մրցման դաշտում ուրիշ գործ չունեն. վախկոտը պիտի պատժուի:

Ուստի պարտաճանաչ քահանան պատերազմ պիտի մղի տգիտութեան և խաւարի դէմ, որ շատ և շատ դժուարութիւններ ունի, բայց պիտի անի. պատերազմի աշխարհիկ զինուորը միթէ չի իմա. նում որ պատերազմում վերին աստիճանի զբաղւորութիւններ կան, մտնը աչքի առաջ է, բայց գնում է, որովհետեւ պարտաւոր է գնալ. նա խօսք է տուել. քահանայ զինուորն էլ նոյն է, նա նրա համար է ձեռնադրուել՝ որքան կարելի է խաւարի պատերազմում առաջ գնայ և ոչ մի ժամանակ չնահանջէ. առանց դորան զիւղական քահանային ապրել, շնչել և չղգալ այդ ամենը այս լուսաւոր դարում՝ միթէ՞ կարելի է: Ժողո-

վուրդը տգէտ է. պիտի լոյս տայ քահանայ—ուսուցիչը. այժմս այն ժամանակը չէ, որ լոկ ծիսակատարութեամբ ապրենք. այդ սրբազան աւանդութիւններն ու ծէսերն մինչև վերջին խօսքը արբութեամբ պէտք է կատարել. բայց գուզնութեցաբար տանելով լուսաւորութեան հետ խաւարի դեմ պատերազմ մղել վերոյիշեալ միջոցներով: Պարտաճանաչ քահանան իւր հեղինակաւոր ձայնով պիտի ժողովրդի մէջ տեղի ունեցած գժտութիւնների առաջն առնի, հալածեալին—զրկեալին պաշտպան հանդիսանայ: Սակայն սա մի փոքր վտանգաւոր գործ է, ուստի և շատ զգոյշ պիտի լինել, որպէս զի չենթարկուի ինքը հակառակ կողմի հալածանքի, իր ուշք ու միտքը պիտի կենդրոնացնէ հաշտութեան վերայ: Դժբաղդաբար ես տեսել եմ շատ քահանաներ, որոնք ընդ հակառակը, զանազան պատճառներով բորբոքել են ժողովրդի կրքերը: Քահանան ճիշտ է, տարին երկու անգամ՝ Զատիկին և Զրօրհնէքին անապայման այցելում է իւր հօտին. սակայն այդ այցելութիւնը այնքան շտապ է լինում, որ ոչինչ չէ կարելի խօսել և մանաւանդ ընտանիքի դրութեան հետ ծանօթանալ: Պարտաճանաչ քահանան տարին մի քանի անգամ հերթով բոլոր տները պիտի անապայման այցելէ, պիտի շփուի, հարցնի նրանց հոգեւոր դրութեան, ընտանեկան կեցութեան, վշտերի... մասին և հարկաւոր խորհուրդներ տայ: Հարուստ ու աղքատի տարբերութիւնը գոյութիւն չպիտի ունենայ նրա մօտ, նա իւր բա-

ուարանի «հարուստ և աղքատ» խօսքերին պիտի աւելացնի. «Երկուսն էլ հաւասար են իմ աչքին»: Վերոյիշեալ այցելութեամբ ոչ ոք առիթ չի ունենայ ասելու թէ մեր քահանան չէ հետաքրքրուած մեզնով, այլ հետաքրքրուած է իւր գրպանով: Այստեղ նա կը լինի պիտանի իւր հօտին. որովհետեւ աշխատում է միջոցներ գտնել ժողովրդի վերքերը բուժել և յաջողութիւնը այն ժամանակ կարող է լինել կատարեալ՝ երբ քահանան չի հակասի իւր խօսքերին իւր վատ վարքով:

Պարտաճանաչ քահանան ցանկալի է որ սիրահար լինի կարգին եւրոպական սիստեմով, բազմատեսակ ծաղիկներով զարդարուած պարտիզի, եթէ յարմարութիւն ունի իւր ձեռքերով ևս պիտի գոնէ թեթեւ մշակի իւր պարտէզը և աշխատանքի օրինակը ուրիշներին էլ տայ: Թերեւս մէկը դուր գայ և ասի — թէ ի՞նչ կապ ունի պարտէզը քահանայի կոչման հետ. սորան մենք կը պատասխանէինք — նախ՝ ամեն մարդ, քահանայ թէ աշխարհական, առողջապահական տեսակէտից պիտի սիրէ այդ պարապմունքը, հէնց իւր և ընտանեաց օգտի համար, ի հարկէ որքան ձեռնհաս է երկրորդ՝ նա քահանայի համար խորհրդաւոր է, չէ՞ որ նման է այն հոգևոր պարտիզին, որին նա հովուում է. թող նա միշտ աչքի առաջ ունենայ որ ինչպէս այդ նիւթական պարտէզը առանց խնամելու ոչինչ է և կարող է չորանալ, փշա-

նալ՝ այնպէս էլ այն հոգևոր պարտէզը, որի քահանայ — պարտիզականը ինքն է. առանց խնամելու կը ոչնչանայ, կը թառամի և նիւթական պարտիզի պէս կը դառնայ: Եւ վերջապէս միթէ սիրելի չէ ամեն մէկիս համար գեղեցիկ ծաղիկներով, ածուներով և ծառատունկերով զուգուած մի պարտէզ ունենալ, դա մի անմեղ և առողջապահիկ զբաղմունք է և բնութեան հրճուանք, հազար անգամ աւելի ազնուացուցիչ մի պարապմունք, քան դատարկապօրտ շրջագայութիւնները:

Քահանան գիւղատնտեսական փորձերից մի քանիսը կարող է այդ տեղում էլ անել իւր ծրխականների մի քանիսի կամ շատերի ներկայութեամբ:

Քահանան մի մեծ պատերազմ ևս ունի մղելու արբեցողութեան և բամբասանքի դէմ, այդ երկու տեսակ թոյնը գիւղերում շատ է տարածուած. ում յայտնի չէ որ այդ երկու անպիտան սովորութիւնը բանական մարդուն կատարելապէս անասնացնում է, ցանկալի է որ իւր օրինակով (դժբաղդաբար գիւղական քահանաներից որոշ թիւը շատ մտերիմ են բաքոսին) ամեն կերպ դէմ դնել խելացի, տոկոս համբերութեամբ. որպէս զի տգէտ ամբոխը չըղայրանայ, պիտի նրան երկար ու բարակ, քաղցր խօսքերով հասկացնել գինովութեան և բամբասանքի վնասների

անխուսափելի հետևանքների մասին: Այս ամենը, բնական է որ տգէտ ամբոխի կողմից առանց քահանայի հետ անախորժութիւն ունենալու չի անցնի, բայց ինչ արած, քահանայի սեպուհ պարտականութիւնն է, կամ պիտի առաջն առնի և կամ հեռանայ առպարիզից, ուրիշ ճանապարհ չկայ:

Գիւղական քահանան, եթէ նրա հանգամանքները կը ներեն, գոնէ մի անգամ իւր կեանքում պիտի աշխատի ճանապարհորդութիւն կատարել գէպի հայրենի սրբազան վայրերը, մանաւանդ ս. Էջմիածին, գէպի Ռուսաստանի գլխաւոր կենդրոնները և արտասահման, ըստ ներելոյ, ի հարկէ նիւթական և այլ հանգամանքների: Ճանապարհորդութիւնից անպայման մեծ օգուտ կը ստանայ, որով աւելի պիտանի կը լինի իւր հօտի շինութեան մեծ գործին, իսկ եթէ հնարաւորութիւն չունի ճանապարհորդելու՝ ընթերցանութեան միջոցով պիտի հետաքրքրուի լուսաւորեալ երկիրների գիւղական քահանաների նիստ ու կացով ու նրանց գործունէութեամբ և օգուտ քաղել:

Մեր մի քանի խօսքերով թոյլ տուինք մեզ նկատել թէ ինչ կարող է անել գիւղական քա-

հանան, ինչպէս և ինչ է նրա իսկական կոչումը: Իմ տեսած բազմաթիւ գիւղական քահանաներից և գիւղերից ես այն եզրակացութեանն եմ եկել — որ այս ամենը անկարելի չէ մի անբիծ, ինքնակերթութեան սիրահար, քիչ շատ զարգացած քահանայի համար, միայն թէ կամք լինի և հաւատ: Գիւղում երբ այդպիսի քահանայ երեւայ, բանիմաց ժողովուրդը կամ երիտասարդութիւնը, անկասկած լուրջ ուշադրութիւն պիտի դարձնէ և ամեն կերպ կաջակցէ նորան: Իսկ եթէ և այդ գէպըում երեսը դարձնէ՝ նշանակում է թէ մենք անարժան ենք պարտաճանաչ քահանայ ունենալու. և այն «ձրիակերներն» էլ շատ են մեզ. ուստի պիտի ժողովուրդը մտածէ: Զիշտ է գիւղական ժողովրդի մեծ մասը շատ տգէտ է և այս ամենը հասկանալու անընդունակ, բայց հասկացողները պարտաւոր են միւսներին հասկացնելու իրանց պարտքը — որ այժմ հանաք անել չի կարելի արժանաւոր քահանայի հետ. պիտի օրինաւոր վարձատրեն կամ տարեկան որոշ գումարով կամ օրինակատարութեան ժամանակ. սիրտ պիտի տան, քաջալերեն և հովանաւորեն. մասամբ ևս ժողովրդից է կախուած, որ իրանց քահանան «ձրիակեր» չլինի. ցանկալի է որ քահանայութեան ձգտողները, որոնք մտադիր են արժանապէս ծառայել ժողովրդեան՝ չշտապեն. այս վեհ նպատակի համար աւելի լաւ պատրաստուեն և ապա միայն նուիրուեն ժողովրդին: Այդ ճանապարհով պիտի վերականգնուի գիւղական քահա-

նաների պատիւը, որով ժողովուրդը կը համոզուի  
որ ճիշտ է կան «ճրիակներն»։ Բայց կան և  
գործունեայ աշխատաւոր հովիւ — մշակ քահանա-  
ներ, որոնք կը լինին մեր փայփայած, ամենքին  
ցանկալի գաղափարական քահանաները, հասա-  
րակութեան քրտնաջան նեցուկները և նրանց  
տուն շինողները։

Այս մեր խորին համոզմունքն է։

ՅԱԻԵԼՈՒԱԾ

## ՀԱՄԱՌՈՑ ԾԱՂԿԱՔԱՂ ՍՈՒՐԲ ԳՐՔԻՑ

Թէ հոգեւորականները ինչպէս պէտք է լինին եւ  
ինչպէս չպէտք է լինին.

### 1) Քահանան պարտաւոր է լինել՝

Մաքուր: (Եսայ. ԾԲ. 11: Ա. Տիմ. Գ. 9):

Սուրբ: (Ղեւ. ԻԱ. 6: Տիմ. Ա. 8):

Խոնարհ: (Գործ. Ի. 19):

Անարատ: (Ա. Տիմ. Գ. 2: Տիմ. Ա. 7):

Յօժարակամ: (Եսայ. 2. 8: Ա. Պետ. Ե. 2):

Անշահախնդիր: (Բ. Կորնթ. ԺԲ. 14: Ա. Թեա. Բ. 6):

Անաչառ: (Ա. Տիմ. Ե. 21):

Հեղահոգի: (Ա. Թեա. Բ. 7: Բ. Տիմ. Բ. 24):

Անձնանուէր: (Գործ. Ի. 24: Փիլիպ. Ա. 20—21):

Շնորհքով զօրաւոր: (Բ. Տիմ. Բ. 1):

Անձնուրաց: (Ա. Կորնթ. Բ. 27):

Արդար, ժուժկալ: (Տիմ. Ա. 8):

Հիւրասէր: (Ա. Տիմ. Գ. 2: Տիմ. Ա. 8):

Յարմար սովորեցնելու: (Ա. Տիմ. Գ. 2: Բ. 24):

Ուսումնաջան եւ մտածելու պարապող: (Ա. Տիմ. Դ. 13, 15):

Արթուն: (Բ. Տիմ. Դ. 5):

Աղօթասէր (Եփես. Գ. 14: Փիլիպ. Ա. 4):

Իրանց տան բարեկարգութեանը մէջ ճշտութիւն բա-  
նեցնող: (Ա. Տիմ. Գ. 4, 12):

Իրանց ժողովրդի վերայ գորով ունեցող: (Փիլիպ. Ա. 7.  
Ա. Թեա. Բ. 8, 11):

Իրանց հօտին օրինակ: (Փիլիպ. Գ. 17: Բ. Թեա. Գ. 9.  
Ա. Տիմ. Դ. 12. Ա. Պետ. Ե. 3):

2) Քահանան պարտաւոր է չլինել՝

Վիճակներու վրայ տիրող: (Ա. Պետ. ե. 3):

Ազահութեամբ փող ժողովող: (Գործ. Ի. 33. Ա. Տխմ. Գ. 3. 8. Ա. Պետ. ե. 2):

Կռուող: (Ա. Տխմ. Գ. 3. Տխտ. Ա. 7):

Խարդախ: (Բ. Կորնթ. Դ. 2):

Մարդահաճոյ (Գաղ. Ա. 10. Ա. Թես. Բ. 4):

Արտաթափ և լքանող: (Բ. Կորնթ. Դ. 8 9. 2. 10):

Գինեսէր: (Ա. Տխմ. Գ. 3. Տխտ. Ա. 7):

## II

## ԱՆԿԵՂԾ ԲԱՐԵԳՈՐԾԸ

«Ողորմածութիւնը մեծութեան  
ամենաճիշտ նշանն է»:

Շեքսպիր

## Ա

Աւագ շաբաթ էր, միւս օրը գատիկ էր լուսանալու. ամեն քրիստոնէի համար ցանկալի օր, մեծերի և փոքրերի համար համահաւասար ուրախ օրը, իսկ որբի և խեղճի համար...

Վրաստանի հայաբնակ փոքրիկ քաղաքներից մէկում տիրում էր ընդհանուր ուրախութիւն. եղանակը անձրեային էր. փողոցներում սովորականից դուրս երթեկներին անցուղարձ էր նկատուում. ամենքը տանում էին իրենց գնած զանազան իրերը և ուտելիքները:

Ո՞վ չէր պատրաստութիւն տեսնում թէ՛ այդ երեկոյ օրինաւոր թաթախումն տօնելու և թէ՛ միւս օրուայ Ս. Յարութեան նուիրական տօնը արժանապէս տօնելու: Քաղաքի բնակիչներէր շատերը աղքատ էին, բառիս բուն նշանակու-

թեամբ, սակայն ունեւորները երբեք նրանց մասին չէին մտածում. մէկի տանը հարկւրներ էին ծախսւում, միւսի տանը այդ չափ կոպէկ էլ չկար: Բայց քաղաքում թէ ամենաողորմելի մի տուն կար, այդ Մանալենց տունն էր: Շատ դժբաղդ ընտանիք էր, ընտանիքի հայրը-Արշակը վախճանուել էր. մնացել էր նրա հիւանդոտ կինը—երեք որբերի մայրը: Այլի Մարիամը, գեռ մինչև այդ օրը մարդու թաղման պարտքից չէր դուրս եկել, թէև մի շատ բան չէր, սակայն չունեւորի համար մի կոպէկն էլ մեծ փող է:

Թշուառ էր խեղճ Մարիամը իբրև այրացած մի կին. բայց այդ գեռ ոչինչ. տանը հաց չկար ուտելու. այդ էլ ոչինչ. բնակարանը մի գետնափոր խրճիթ էր ներկայացնում, խոնավ և ցուրտ. անձրևը կաթկթում էր տանիքից. պատերը թաց. կարծես արտասւում էին. իսկ այնպէս՝ ինչպէս Մարիամի սիրտը, որտեղից վաղուց անհետացել էին յուսոյ նշոյլները: Ում գիմէր, քանի որ ամենքից մերժում էր ստանում. մանաւանդ որ ինքն էլ շատ ամօթխած էր, ունայն խօստումները շատ էր լսել Մարիամը. իսկ գործ ու օգնութիւն տալուին ոչ ոքից չէր տեսել: Ամբողջ շաբաթ հիւանդ, կմախք դարձած և սակայն աշխատանքի մէջ էր. նա աշխատել էր ընդամենն 75 կոպէկ և այդ խղճուկ շաբաթավարձով պիտի պահէր իրեն էլ, որբերին էլ: Օ՛, աղքատներին չխղճացող հարուստներ, կը կամենայի որ դուք էլ մի օր գէթ մի օր շաբթուայ մէջ այդպիսի օրեր ողջունէիք. ճհ, գուցէ

այն ժամանակ էլ մեր կրէզները ոչինչ չգրային, համարելով այդ իբրև կեանքի խաղ: Եւ այդպիսի մի կրթիչ փորձից յետոյ էլ արդեօք կորոնէին խեղճին ու որբին...: Այդպէս էր այդ ողորմելիների հալը և Աւագ Շաբթի օրը երբ այդ երեկոյից սկսած մարդիկ տօնում են թշուառների իսկական բարեկամ Քրիստոսի Ս. Յարութեան տօնը: Որբերը լաց էին էին լինում և հեծկտալով՝ դիմում մօրը ասելով—«մայրիկ ջան մըսում ենք. ցուրտ է. քաղցած ենք հաց տուր». խեղճ մայրը ի՞նչ պիտի տար երբ բան չունէր, մուրալն էլ ամաչում էր: Նա դառնաբար անիծում էր իր բաղդը, բայց ինչ օգուտ. փորը իրանն էր պահանջում, ողորմելի որբուկները գրեթէ մոռացել էին թէ այդ գիշերը, զատիկ գիշեր էր: Բայց ի՞նչը կը մոռացնէր այդ իրացանցում ձգող ուրախ հանդիսաւոր գիշերը. մոռանալու գիշեր չէր...

Բ

Հէնց այդ ընկերներին եկւոր մի ընտանիքի հայրը, որին Միսաք էին ասում, մի բարձրահասակ թուխ գէմբով, միրուքը ածիլած, գնում էր այն փողոցով որտեղ ապրում էր Մանալենց ընտանիքը: Միսաքը մշակի ձեռքով տանում էր ընտանիքի համար 35 ուրբլու ամեն ինչ, որ հարկաւոր էր զատիկը արժանապէս տօնելու համար: Մանալենց բնակարանի առաջից անցնելու ժամանակ նրա ականջին հասաւ թշուառութեան

աղիոգորմ ձայները. նա հետաքրքրուեցաւ, մօ-  
տեցաւ և լսեց յիշեալ դռնն խօսքերը:

Միտաքը աւամայ տեսնում էր մի թշուառու-  
թիւն իր գազաթնակէտին հասած և զգաց որ  
պէտք է օգնել, այդ բոպէին նրա խիղճը այդ  
թելագրեց, ապա թէ ոչ ինչ նշանակութիւն ունի  
մեր ամենօրեայ կարգացած լրագիրը և զբքերը.  
չէ՞ որ նրա գէթ մի հարիւրերորդ մասը պիտի  
կատարենք, այսպէս էր մտածում նա:

Մշակին տուն տարաւ, յանձնեց ամեն ինչ,  
պատուիրեց որ ամեն բան կարգին լինի և շու-  
տով վերադարձաւ թշուառութեան փողոցը, որ-  
տեղից լսել էր յուսահատական ձայները: Մօտե-  
ցաւ և նոյն ձայնը լսուեց, մտաւ բնակարանը և  
լսեց նրանց վիշտը, որ հաց չունէին և ոչ որ  
և է բան, բառիս բուն նշանակութեամբ իսպառ-  
զրկուած էին ամեն ինչից, բնակարանը ողոր-  
մելի էր, կամ ճիշտ ասած անասունների մի որջ,  
խոնաւ և կեղտոտ: Միտաքը շատ ընթերցասէր  
էր, շատ գրքեր էր կարդացել, այս անգամ շատ  
բան յիշեց և առանց շատ մտածելու յուսադրեց  
պահապան հրեշտակի պէս որ մի բանի բոպէից  
յետոյ ամեն ինչ կը ստանան ու գնաց:

Գ.

Անցաւ մի քանի բոպէ, թշուառների բնա-  
կարանը լցուեց թէ հարկաւոր բաներով և թէ  
գրամական պարգևով, հիւսն Սերգօն էլ մշակի հետ

եկել էր և սկսել զրտակ առատաղի քանդուած-  
ները այս միջոցին պատարագի զանգերը սկսան  
դողանջել և բարեպաշտներին ժամ հրաւիրել.  
բաղդից հալածուածները չգիտէին թէ ի՞նչպէս,  
ի՞նչ տեսակ շնորհակալութիւն յայտնէին, մինչև  
երկինքը բարձրացաւ նրանց ուրախութեան ձայն-  
երը. մանուկները անակնկալ ուրախութիւնից  
լաց էին լինում և իրանց մանկական անմեղ բե-  
րանով աղաղակում էին, «Աստուծ երկալ կեանքը  
տուլ Աղային...» բայց հետն էլ վախենում էին,  
թէ չլինի այս ամենը երազ է: Դեռ ոչ մի բան  
բերանը չգրած զրկած բաներից, նրանք կարծես  
թէ կշտացել էին և ուժաւորուել: Հիւսն էլ իրա  
բանը վերջացրեց: Միտաքը նրան տուեց հասա-  
նելի վճարը և խնդրեց որ չտարածէ իւր ջնջին  
բարեգործութեան լուրը: Իսկ ինքը գալով, հար-  
ցրեց թշուառներին թէ ուրիշ էլ պակասութիւն  
ունեն. երեխաները նրա ձեռքերը սկսեցին համ-  
բուրել, թշուառները իրենց հարուստ գալով ոչ  
մի նոր բան չխնդրեցին, եղածի մասին էլ շատ  
շնորհակալ եղան: Միտաքը սրանց էլ խնդրեց որ  
ոչ ոքին բան չասեն, որովհետեւ իւր արածը մի  
պարտք էր, որ ամեն մէկը պարտական է անել.  
մանաւանդ այսպիսի տօնին. և ուրեմն գովելու  
բան չկայ: Դուրս գալու ժամանակ խնդրեց որ  
այդ երեկոյ բոլորն էլ գան իրենց տունը՝ միա-  
սին թաթախուելու համար:

Միտաքը, որ մօտ 52 տարեկան էր, երբեք իրա կեանքի մէջ այդպէս չէր ուրախացել, այսպիսի լաւ գատիկ իւր համար չէր եկել: Վերադարձաւ իրա տունը, նրա կիներ, Նատալիան արդէն եկել էր Ս. պատարագից, Միտաքին տեսնելուն պէս՝ ասաւ սրտնեղած.

— Ինչո՞ւ պատարագին չեիր եկել, Տէր Հայրն էլ հարցրեց, ահա քեզ նշխարք. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Միտաքը «օրհնեալ է Յարութիւն Քրիստոսի» ասեց և աւելացրեց թէ պատարագի փոխարէն նա թշուառներին պատարագն է տեսել. որը հաւասար է պատարագ տեսնելուն. իսկ վաղը խոստացաւ գալ Ս. պատարագին մաքուր խղճմտանքով...

Եկաւ ժամանակը և Մարիամն ու իւր որբիկները Միտաքի տանն են. նոքա անհամարձակ էին. հնայելով Միտաքի սիրալիր ընդունելութեան: Իսկ Միտաքի կին Նատալիան այնքան էլ գոհ չէր, շատ էր ափսոսում որ այն փողերը իրան հասաւ լօտոյի համար...

Միւս օրը արդէն տարածուեցաւ ամեն տեղ Միտաքի բարեգործութիւնը, որը բանբաստսէրները զարգարեցին իրենց հազար ու մի ասէկօսէներով. բայց ո՞վ և կամ ի՞նչ կարող էր ճնշել Միտաքի բարեգործ սիրտն ու զգացմունքները. նրա խիղճը մաքուր էր. շատ մաքուր և չէր վրդովւում, նրա սիրտը մանկական պարզութեամբ էր շողշողում. բարիք և ողորմութիւն անելու համար նա ծարաւ էր. չարախօսութիւն-

ները չէին կարող վնասել նրա բարի անուանը, նրան բոլորն էլ ճանաչում էին: Մնարդար ասէկօսէները նսեմացան ճշմարտութեան առաջ. և Միտաքը Քրիստոսի հետ միասին տօնում էր իւր յաղթանակը:


Միտաքը Յարութեան այս երեկոյին վճռեց խնամել թշուառներին մինչև փոքրիկների կատարելահասակ լինելը...

Ահա Պատարագ, ահա Հաղորդութիւն— որբերը ոտի կանգնեցան... խուզը նորոգուեց:





937



Ծախսում է Թիֆլիսի գրափաճառանոցներում և  
հեղինակի մօտ: Հասցեն՝ Դ. Душетъ Константи-  
ну Априлянъ.

Հեղինակից քսան օրինակ գնողը ճանապարհա-  
ծախս չէ վճարում:



938

0027679



